

Այդ հաստատութեան համար կարող Տեսչի մը պէտքը անհրաժեշտ է: Վասն զի Կ. Վարժարանի այս նոր շրջանը Տեսուչ չունի եւ խնամակալութիւնը՝ ինքը կը վարէ Տեսչի պաշտօնը:¹

Եկեղեցին, որ Ղալաթիոյ համար միայն Հինգշաբթի օրերուն նշանակութիւն ունի, ինչպէս նաեւ մեծ տօներուն, հաստատուն ժողովուրդ կամ ծուխ գրեթէ չունի:

Երեք քահանայ, Տ. Մեդրոյ (1886), Տ. Գաբրիէլ (1884) եւ Տ. Թադէոս (1900), կը պաշտօնավարեն²: Պոլսի միւս եկեղեցիներուն պէս՝ քահանայից ապրուստի խնդիրը եւ այդ խնդիրը լուծելու համար տիրող եւ սովորական միջոցները այնքան սուղ են եւ ստորին որ քահանայական արժանապատուութիւնը կը տկարանայ: Փոփոխել է որ այս քահանայան, այս յաւիտեական համարձաք խնդիրը լուծուի զոհեր գնել Ս. Լուսաւորի ոչ ոք հարգող եկեղեցիներու մէջ:

Ս. Լուսաւորիչի կալուածներուն վիճակը՝ խնամակալութեան խնամատ ուշադրութեան առարկայ եղած եւ կարելի եղած նպաստաւոր պայմաններով կը շահաւորուին:

Ս. Լուսաւորիչ Եկեղեցին, որ հիմայ տարին երկու անգամ — Յիսնակի Բարեկենդանի Կիրակին եւ Տօն Կաթողիկէին — մասնաւորապէս կրօնական հանգէսով կը փառաւորէ իր հանգուցեալ բոլոր բարերարաց յիշատակը³, ըստ իս

1 Մաղաքիա Պատրիարք՝ այնքան հոգածու է որ Կեդրոնականի նշանակութեան եւ համբաւին, կը փափաքի աւելի յարմար միջավայրի մը, Բերա, տեղափոխել զայն իր նպատակին ծառայելու վիճակին մէջ գնելու համար:

2 Երեք հոգի իբր Լուսաւոր եւ երկու ալ իբր Եմօն կ'աշխատին:

3 Հոկտմ. 26ին մօտ, յարմար ԵՇ. օր մըն ալ Ներսէս Պատրիարքի յիշատակին կրօնական մասնաւոր հանգէս կը կատարուի եւ Կեդրոնականի բոլոր ուսանողները ներ-